

25339

ԲԱՐԳԵՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ

ԺՈՂՈՎԻ ԹՈՒԱԿԱՆԸ ԵՒ ՏԵՂԸ.

Շատերի համար գուցէ մեր այս յօդուածի վերնագիրը տարօրինակ կ'ընդունուի, քանի որ մեր հայեացքն այդ խնդիրներին մասին յայտնի է հետաքրքրուողներին¹ և մենք այժմ էլ ոչ մի առիթ չունինք փոխելու մեր արտայայտած կարծիքը: Մեզ թուում էր, թէ վերջնականապէս պարզուած է, որ Բարգէնը իւր յայտնի ժողովը դուժարել է 505/06 թուականին և Գուրխուժ Բայց գուրս է գալիս, որ այդ կասկածի է ենթարկուում Վիեննայի Մխիթարեան երկու հայրերի կողմից, որոնք քաջամանօթ են հայ բանասէրներին և որոնց կարծիքը կարող է նշանակալիւն ստանալ այդ խնդրում: Կասկածի ենթարկողներն են Հ. Հ. Գաթըրճեան և Ն. Ա. Կիրեան:

Վերջինս, Վիեննայի Մխիթարեան երկուտարգ ապագայ խոստացող եռանդուն և աշխատասէր բանասէրներից մէկը, «Հանդէս ամսօրեայի» սոյն 1908 թուականի յունիս տետրակում մի աշխատութիւն է սկսել տպագրել «Կիւրիոն կաթողիկոս Վրաց, պատմութիւն հայ—վրական յարաբերութեանց եօթներորդ դարու մէջ» վերնագրով (էջ 166—172): Այդ յօդուածի մէջ խօսելով Ձենոնի Հենոտիկոնի բնութենէն թեան մասին (Հանդէս, էջ 169), ասում է. «Բարգէնն էր այն ժամանակ հայոց կաթողիկոսը (506/07—512/13): Պատասխանելու համար կայսեր խնդրանքին ու Հենոտիկոնին, դուժարուեցաւ ժողով մը: «Գումարման տեղն այս անգամ Գուրխ հայոց ոստանն եղած չէ, հապանոր—Քաղաքը, այսինքն Վաղարշապատ Մայր եկեղեցւոյ մէջ, անշուշտ ասիկա աւելի կենդրոնական ըլլալով Վրաս-

1) Հմմտ. մեր Die armenische Kirche in ihren Beziehungen zu den syrischen Kirchen, 1904. էջ 31—39.

տանէն, Աղուանից և Սիւնեաց երկիրներէն գալու եպիսկոպոսաց համար: Այս տուներն ապա աւելացնում է հետեւեալ ծանօթութիւնը. «Իւրեքձէան Հ. Յ. — Իրաւախոհ, կեղծիքը և այլն, Բ. (անտիպ): Հմտ. Յովհ. պատմաբան, 36. «Բարդէն առնէ ժողով եպիսկոպոսաց Հայոց, Վրաց և Աղուանից ի նոր Քաղաքի ի Սուրբ կաթողիկէին ի մայրն եկեղեցեաց Հայոց: Տէր Միւսէանց Ե. Լ. Die armen. Kirche, էջ 32. անիմանալի պատճառաւ Դուին կհամարի ժողովատեղին: Այս մասին տես մեր մատենախօսականը Հանդ. Ամս. 1904. էջ 212»:

Այդպիսով մեզ վրայ պարտականութիւն է ընկնում բացատրելու, թէ ինչու մենք Դուինն ենք համարում ժողովատեղին: Բայց նախ քան մեր բացատրութեանն անցնելը, կարևոր է ծանօթանալ Հ. Հ. Գաթըրճեանի և Ակինեանի բոլոր պատճառաբանութիւնների հետ:

Մասնացոյց արուած Մատենախօսականի մէջ Հ. Ն. Ակինեանը (Հանդէս ամս. 1904, էջ 211—212) խօսում է Բարդէնի ժողովների (!) մասին և գալիս է հետեւեալ եզրակացութեան. Բարդէնը գումարել է 3 ժողով. առաջինը տեղի է ունեցել Կաւատայ ԺԲ. տարին: Այդ թուականի համար էլ Հ. Ակինեանը կասկած է յարուցանում հետեւեալ կերպով (Հանդէս ամսօրեայ 1904. էջ 42. «Կաւատայ 18. տարին որոշելու համար պատշաճ կհամարենք Հ. Գաթըրճեանի «Հանդանակ Հաւատոյ» երկին հրատարակողին սուր և միանգամայն ճիշտ դիտողութիւնն յառաջ բերել, որ ցարդ մեր և այլոց ուշադրութենէն վրիպած էր. Կաւատ ըստ նորագոյն քննութեանց (Նեօլգեկէ) թագաւորած է 488-ին. ըստ այսմ այս թուղթն գրուած ըլլալու է 506-ին. Սակայն Կաւատայ թագաւորութիւնն իբր 4 տարի ընդհատած է Ջամասպայ ապրտամբութեամբն՝ յամին 496. Արդ խնդիր կրնայ յառնել թէ ինչպէս կհաշուէին Հայք Կաւատայ թագաւորութեան տարիներն. արդեօք այս 4 տարին իւր կառավարութեան թուականէն կհանէին, թէ մէկտեղ կգումարէին: Հիմակուան ժամանակս յայտնի բան է և որոշ գիտենք, թէ ինչպէս գործածած են Պարսկաստանեայք և մեր Հայք. այսինքն

Թողով մէկդի Ջամասպայ թագաւորութեան 4 տարին, հաշուելով միայն իւր կառավարութեան տարիները: Ըստ այսմ Կաւատայ ԺԲ. տարին իրաւ 510»։ Իւր կողմից այս, ինչպէս յետոյ կտեսնենք, միանգամայն սխալ դատողութեանն ու հաշուին Հ. Ն. Ակինեանն աւելացնում է (Հանդ. ամս. 1904. էջ 211 շար.). «Ըստ այսմ պէտք է ենթադրել թէ Բարդէնի Ա. թղթին մէջ յիշուած ժողովն գումարուած է 510-ին: Բարդէնի Բ. թղթի մէջ ևս կտեսնուի ժողով մը. որովհետեւ թուղթը կառաքուի կաթողիկոսէն, եպիսկոպոսներէն «ըստ դաւառաց և ըստ տանց, յամենայն ուխտէ ս. եկեղեցւոյ մերոյ և յիշխանաց Վարդայ Մամիկոնից Տեառնէ և ի Հայոց մարդպանէն» և այլն: Դրութեան ժամանակն առաջին նամակէն շատ ուշ չբեւար, որովհետեւ Վարդ տակաւին կենդանի է, որ ըստ Սեբէոսի «սակաւ ինչ» ժամանակ ապրեցաւ: Ուրեմն կարելի է դնել 514—515-ի մէջ երբ: Ապա յիշելով, որ մի Գ. թուղթ էլ, պայման նամակ իջուած, գրած պիտի լինի Բարդէն կաթողիկոսը Վրաց հետ միասին Քաղկեդոնի ժողովի և Լեօն պապի տուժարի դէմ (Իիւք թղթոց էջ 165, 182—183) ուր շեշտուած է եղել Հայերի և Վրացիների միաբանութիւնը, աւելացնում է. «Արդ՝ որովհետեւ այս թուղթն գրուած է ժողովի մը մէջ, ուր ներկայ գտնուած են Հայոց, Վրաց, Աղուանից կաթողիկոսը ևս, և նշոված են Քաղկեդոնի Ս. ժողովն ու Մեծին Լեօնի տուժարը «Ձենոնի բարեբանելոյ թագաւորին Հոռոմոց» թղթոյն համեմատ, չի կրնար այս ժողովն նոյն ըլլալ Ա. և Բ. թղթոց մէջ յիշատակուած ժողովոց հետ: Ժողովը գումարուած կերևայ Ա. և Բ. ժողովներու մէջ տեղը, իբր 512—3, վառն դի Բ. թղթի մէջ Քաղկեդոնի ժողովն արդէն մոլորական կհամարուի և Ձենոնի Հենոտիկոնի վարդապետութեան քաջ յարեալ: Ըստ Հ. Գաթըրճեանի Հայք առաջին անգամ հոս ընդունեցան Վրաց և Աղուանից հետ Ձենոնի Հենոտիկոնն, որով և Քաղկեդոնի ժողովոյն սահմանն մերժեցին: Եւ այս ժողովը գումարուած պիտի լինի ինչ թէ Դուինում, այլ Վաղարշապատում 512|13 թուին:

Մենք գիտեմք ընդարձակ կերպով և իւր իսկ խօսքերով մէջ բերինք պատճառաբանութիւնները, որպէսզի թիւրիմացութեան ոչ մի առիթ չլինի Տեսնենք այժմ, թէ որքան հիւր ունին այդ ենթադրութիւնները:

Ամենից առաջ բոլորովին անվիճելի է, որ Կաւառայ ժլ. տարին Բաբգէնը մի ժողով է գումարել Դուրինում և ոչ այլ տեղ, ինչպէս այդ պարզ կերպով շեշտուած է ժողովական թղթի մէջ. «Ժողովեալ էաք յԱյրարատ դաւառ, յոստանն Հայաստան աշխարհիս ի Դուրն քաղաք»¹։ Այլ ժողով Բաբգէնի օրով գումարուած և այլ տեղ մենք չենք ճանաչում։ Այդ պատճառով էլ մեր գրքում տառեր ենք, որ ժողովը գումարուած է եղել Դուրինում։ Այդ ժողովի տեղի մասին վէճ ուրեմն լինել չի կարող։ Բայց ոչ միայն տեղի, այլ և ժամանակի մասին խնդիր յարուցանելը յառաջ է գալիս գործին լաւ տեղեակ չլինելուց։ Չնայելով Զամասպի ապստամբութեան ու Կաւառի թագաւորութեան ընդհատուելուն, Կաւառի ժլ. տարին այնուամենայնիւ պէտք է հաշուել 506-ը, և ոչ երբէք 510։

Զարմանալի է, որ Կաւառի թագաւորութեան համար վկայութեան կոչելով Նեօլգեկէին, Միթիթարեան հայրերը չեն հետաքրքրուել տեղեկանալու նրա կարծիքը հէնց իրենց շօշափած խնդրի մասին։ Եթէ նոքա այդ արած լինէին, նախ սխալից ազատ կ'մնային և ապա՝ այնպէս փոտահ և վճռական կերպով չէին պնդի, թէ «հիմակուն ժամանակս յայտնի բան է և որոշ գիտենք, թէ ինչպէս գործածած են Պարսկաստանեայք և մեր Հայք. այսինքն՝ թողլով մէկդի Զամասպայ թագաւորութեան 4 տարին, հաշուելով միայն իւր կառավարութեան տարիները»։ Չէին պնդի և խնդիր ամենին չէին յարուցանի, ասում ենք, որովհետեւ կ'աւանդէին, որ Կաւառը ինքը այդ 4 տարին հաշուել է և հոգ է տարել, որ այդպէս էլ հաշուեն իւր հպատակները։ Բայց աւելի լաւ է, լսենք Նեօլգեկէին²։

¹) Թուղթ Հայոց ի Պարսս առ ուղղափառս, Գիրք Թղթոց, 42 42.

²) Geschichte der Perser und Araber zur Zeit der Sasaniden. Aus der arabischen Chronik des Tabari übersetzt und mit ausführlichen

Նրա ասելով Կաւառը մեռել է 43 տարի երկու ամիս թագաւորելուց յետոյ, 531 թուականի սեպտեմբերի 13-ին։ 43 տարի երկու ամիս իշխանութիւն է վերագրում նրան Մալալան և աւանդութիւնն էլ համաձայն է նրա հետ։ Աւելի կարեւոր նշանակութիւն ունի սակայն այն, որ նրա թագաւորութեան տարեթուերը իւր դրամների վրայ յիշաւ մինչև 43 համեմատ են։ «Այդպիսով նրա առաջին տարին կլինի 488 թուականի յուլիսի 22-ին սկսուողը։ Նրա թագաւորութեան միջոցին են ընկնում նաև իւր եղբոր ու հակառակորդի՝ Զամասպի տարիները։ Սրա դրամները կրում են 1—3 տարեթիւր. դրանով նա կ'ամենում էր որոշ կերպով իւր իշխանութիւնը իբրև նոր, անկախ ցոյց տալ։ Բայց հէնց որ Կաւառը նորից ասպարիզի վրայ երևաց, իսկոյն իւր դրամների վրայ էլ տարեթուեր նշանակեց, որով նա սեպհականեց Զամասպի տարիները և նրան յայտարարեց այդպիսով բռնապետ։ Այդ հաշիւը (դրամների վրայ) սկսում է նրա 11-րդ տարով և ինչպէս ասացինք, գնում է մինչև 43-րդը։ Նրա 11-րդ տարին կլինէր ուրեմն 498 թուի յուլիսի 20-ին սկսուողը, որ և հաւասար կլինէր Զամասպի Գ. տարուան, Զամասպի Ա. տարին այդպիսով կլինի 496-ի յուլիսի 20-ին սկսուողը¹։»

Erläuterungen und Ergänzungen versehen von Th. Nöldeke. Leyden, 1879. Excursus. I. Chronologie der Sasaniden, էջ 427—428.

1) Kawādh starb... nach einer Regierungszeit von 43 Jahren und 2 Monaten am 13. September 531, 2 Monate nach dem Beginn des neuen persischen Jahres.... 43 Jahr giebt ihm auch die gewöhnliche Überlieferung, und bis 43 gehen die Jahreszahlen auf seinen Münzen. Sein erstes Jahr ist also das am 22. Juli 488 beginnende. In seine Zeit hinein fällt nun die seines Bruders und Rivalen G'āmāsp. Die Münzen desselben zeigen die Jahreszahlen 1—3; er wollte somit ausdrücklich seine Regierung als eine neue, selbständige hinstellen. Aber als Kawādh wieder auf dem Schauplatz erschien, versah er seine Münzen auch mit Jahreszahlen, wodurch er sich die Jahre des G'āmāsp aneignete und diesen für einen Usurpator erklärte. Diese Zählung beginnt mit seinem 11. Jahre und geht dann, wie gesagt, bis an sein 43-stes. Sein Jahr 11 ist das am 20. Juli 498 beginnende. Die Münzen dieses Jahres scheinen sehr selten zu sein; er hatte da-

Կաւատից առաջ նոյն կերպ վարուել է Պերոզը, որի գրաւմների վրայ առաջին անգամ՝ տարեթուերը հանդէս են գալիս, սեպհականելով Հորմիզդ III-ի երկու տարին, թէև ինքը դեռ թագաւոր չէր, այլ միայն թեկնածու արքայական գահի։ Թէև նա 459 թուին է արքայից արքայ դառնում, բայց այդ թուականը հաշուում է իւր Գ. տարին, գահակալութեան սկիզբն ընդունելով 457-ին։

Ուրեմն, այս բոլորից յետոյ, ոչ մի կասկածի խնդիր չի կարող Դուինի ժողովի թուականն հո. ժողովը տեղի է ունեցել Կաւատի ԺԸ. տարին, որ թէ Կաւատի, թէ ժամանակագիրների և թէ ամեն տեսակ հաշուով կլինի 506 ԹՈՒԱԿԱՆը և ոչ թէ 510-ը։

Անցնենք այժմ միւս խնդրին։ Հ. Ն. Ակինեանն ասում է, թէ «Բարգէնի Բ. թղթի մէջ ևս կոտանուի ժողով մը, որովհետև թուղթը կառաքուի կաթուղիկոսէն, եպիսկոպոսներէն ըստ գաւառաց և ըստ տանց, յամենայն ուխտէ Ս. Եկեղեցւոյ մերոյ և յիշխանաց...» և այլն. ապա Բ. թղթի գրութիւնն ու «ժողովը» դնում է 514—515-ին (1904-ին գրած յօդուածում Հանդ. ամս. էջ 211), այն ինչ Բարգէնի կաթուղիկոսութիւնը դնում է վերջին յօդուածում (Հանդ.

mals wohl erst einen Teil des Reiches in Händen, und das Jahr ist vermuthlich dasselbe, welches sein Bruder als sein drittes zählt ».

Նեոլոգիկէն մինչև անգամ ծանօթութեան մէջ (էջ 427) գործածը է յայտնում, որ ուրիշ կերպ մտածողներ կան. «Es ist seltsam, dass Mordtmann als möglich annehmen kann, ein orientalischer Fürst in der Lage Kawād's habe für die Zeit seiner Ausschliessung vom Thron den Rivalen nachträglich als legitim anerkannt. Dass die Datierung der Münzen eben von seiner Wiedereinsetzung an einen bestimmten Zweck hat, grade wie die bei Pêrôz und bei G'âmâsp, ist doch deutlich. Die chronologische Feststellung des Todesjahres von König Pêrôz entzieht jener Annahme allen Boden». 484-ի յունուար 14-ին արևի լիակատար խաւարումն է եղել, ինչպէս պատմում է Եղիա Ժամանակագիրը (Anm. zu Barh. Hist. eccl. II, 65) և այդ ժամանակ մեռել է Պերոզը։ Նրան տալիս են ոմանք 24—25 և մեծ մասամբ 27 տարի, հաշուելով եղբոր երկու տարին ևս նրա վրայ։ Եթէ 24/25 հաշուենք, կտանանք սկիզբը 459-ին, իսկ եթէ 26 կամ 27, 457-ին, (Հմմտ. վերել)։

ամս. 1908. էջ 169) 506/07—512/13։ Այստեղ պէտք է նկատենք, որ Հ. Ն. Ակինեանը սխալում է, կարծելով թէ Բարգէնի Բ. թուղթն ևս ժողովական թուղթ է, եթէ այդ թուղթը որ և է ժողովում գրուած լինէր, անստատեւ յիշուած կլինէին թղթի սկզբում կամ վերջում անուն անուն բոլոր ներկայ եպիսկոպոսները, ինչպէս այդ սովորութիւն է այդպիսի թղթերի մէջ։ Այստեղ թղթին ստորագրել են հոգևորականներից միայն Բարգէն կաթուղիկոսը և իւր գլխաւոր աթոռակիցը՝ Տարսնի եպիսկոպոս Մերշապուհը, անշուշտ ամբողջ Հայոց եկեղեցու կազմից։ Ամբողջ նամակում և ոչ մի ակնարկ կամ խօսք որ և է ժողովի մասին։ Հ. Ն. Ակինեանին սխալեցնողը «Եւ այլոց եպիսկոպոսաց Հայոց օրք ըստ գաւառաց և ըստ տանց» խօսքերն են, որոնք սակայն նշանակութիւն ունենալ չեն կարող, քանի որ եպիսկոպոսների անունները չկան, որ անհնարին կլինէր, եթէ որ և է ժողովում խմբագրուած լինէր այդ թուղթը։

Բայց այս խնդիրը երկրորդական է. շատ աւելի կարևոր է Հ. Ն. Ակինեանի միւս ենթադրութիւնը, որի համաձայն մի ուրիշ ժողով պիտի գումարած լինի Բարգէնը 512/13-ին Վաղարշապատում, սւր հայերը մերժել են Քաղկեդոնի սահմանը և ընդունել Ջենոնի Հենտիկոնը։ Տեղեկները թէ այդպիսի մի ժողով ընդունելու հիմք կայ, և կարևոր է այն որ և իցէ խնդիր բացատրելու համար։

Հ. Ն. Ակինեանը գրում է¹⁾. «Ժողովոյն ներկայ էին Վրաց Գաբրիէլ կաթուղիկոսն իւր եպիսկոպոսներով, Աղուա, Նից և Սիւնեաց եպիսկոպոսները և այլ բազմաթիւ ազատորեար (Դիրք թղթոց 177), Վրաց եպիսկոպոսաց անունները պահուած են, թէպէտ «ի կարի ծածուկ և այլաձև», Աբրահամ կաթուղիկոսի առ կիւրիսն երրորդ թղթին մէջ (Դիրք թղթոց, 182—183, Հմմտ. Ուխտանէս Բ. գլ. Ծ)»։ Այն հանգամանքը ուրեմն գլխաւորապէս, որ Վրաց կաթուղիկոսը իւր 24 եպիսկոպոսներով չէ յիշուած Բարգէնի 506-ի ժողովական թղթի մէջ, իսկապէս առիթ է տուել

1) Հանդ. Ամս. 1908. էջ 169.

Հ. Ն. Ակինեանին, և ինչպէս մեզ յայտնի է, նաև ուրիշներին, մի Բ. ժողով էլ ենթադրելու, յատկապէս մասնակցութեամբ Վրաց և Աղուանից: Մենք կտեսնենք, որ այդպիսի ժողով ընդունելու հիմքերը ոչ միայն բոլորովին խախտու են, այլ գրեթէ գոյութիւն չունին:

Այդպէս՝ առում են, որ այդ ժողովը գումարուած պիտի լինի 506-ի ժողովից յետոյ և ոչ թէ Դուինում, այլ Վաղարշապատում: Ժողովի տեղը Վաղարշապատն ընդունելու վրան գլխաւորապէս Յովհաննէս կաթողիկոսն է, որ հետեւեալն է առում. «Բարգէն առնէ ժողով եպիսկոպոսաց Հայոց, Վրաց և Աղուանից ի նոր քաղաքի ի սուրբ կաթողիկէին, ի մայրն եկեղեցեաց Հայոց¹»: Յայտնի չէ մեզ, թէ ինչ հիման վրայ Հ. Ն. Ակինեանը այդքան մեծ նշանակութիւն է տալիս Յովհաննէս կաթողիկոսի վկայութեանը: Մենք նրան այդպիսի նշանակութիւն տալ չենք կարող, որովհետեւ բաւական է Յովհաննէս կաթողիկոսից միայն 2 երես կարգաւ, հէնց թէկուզ յիշուած 36 և 37 երեսները, համոզուելու համար, թէ որչափ ճշմարտապատում է նա: Օրինակ Վարդան Մամիկոնեանի ապստամբութիւնն ու Սուրէն մարզպանի սպանութիւնը Դուինում և Հայնախարարների Յունաց երկիր փախչելը դնում է Ղևոնդ կաթողիկոսի օրով 530-ական թուականներին, այն ինչ ժամանակակից Յովհաննէս Նփեսացի պատմիչն առում է, որ այդ դէպքն եղել է 571 թուին և Յովհաննէս Բ. Գաբեղենցու օրով, որ նոյնպէս Կ. Պօլիս է փախել, պատմել Յովհաննէս Նփեսացուն ամբողջ ապստամբութեան մանրամասնութիւնները և երկու տարուց յետոյ մեռել ու թաղուել Կ. Պօլսում: Այնպէս որ Յովհաննէս Պատմաբանը մեր կարծիքով փտտահելի աղբիւր համարուել չէ կարող:

Միւս աղբիւրը, որ իսկապէս աւելի դեր է կատարել Վաղարշապատը Բարգէնի ժողովի տեղն համարելու մէջ, Յովհան Օձնեցուն վերագրուող «Սակս ժողովոց», որ եղէն ի Հալք²՝ գրութիւնն է, որի մէջ կարգում ենք. «Հինգե-

րորդ ժողով արար Բարգէն ի Քաղաքուդաշտի, ի յԺԸ. — Երրորդ ամի թագաւորութեանն Կաւատայ արքայի, յաղագս չար հերձուածոյն Ակակայ և Բարսումայի, որը պեղծ աղանդաւն վարժեալ անիծեալ ախտիւն Նեստորի, ջանային շիջուցանել զուղղափառ հաւատս կողմանց արեւելից, և տնկել զժանդացեալ որոմն դադին փրասակարի Նեստորի անիծելոյ: Վասն որոյ գիր արարեալ Տէր Բարգէն, սահման կապելով, թէ իւ պատրեալ խաբեցեն զձեզ բանք դոցա, քանզի մեք Հայք, Հոռոմք, Վիրք և Աղուանք մի խոստովանութեամբ եմք հաստատեալ ճշմարիտ հաւատով ի լաւ անդր, զոր աւանդեցին մեզ ս. հարքն յերիւ ժողովս. ոչ ընդունիմք զայդպիսի բանս հայհոյութեան, այլ նղովեմք միաբան զնմանիս նորա. և ևս մանաւանդ, որը կցորդին զինի պիղծ աղանդոյն նոցա, նղովեալ եղիցին, և ի սրբոյ եկեղեցւոյ արտաքս մերժեսցին¹»:

Խնդիրը այստեղ սակայն չափազանց պարզ է. ի՞նչ է հասկացել «Սակս ժողովոց»-ի հեղինակը Քաղաքուդաշտ ասելով, արդեօք անպատճառ Վաղարշապատ, թէ գուցէ Դուինն էլ այդպէս կոչուել է, որոշ կերպով ասել չենք կարող: Յամենայն դէպս յետագաների բերանում Քաղաքուդաշտը Վաղարշապատն է: Բայց այնուամենայնիւ արեւի նման պարզ է, որ «Սակս ժողովոց»-ի հեղինակի յիշած Բարգէնի ժողովը և Բարգէնի Ա. թղթի մէջ յիշուածը բոլորովին նոյնն է: Այդ բանը երևում է ոչ միայն նրանից, որ երկուսի մէջ էլ ժողովի թուականը յատկապէս յիշուած է Կաւատի ԺԸ. տարին, այլ նաև նրանից, որ ժողովի նիւթն ևս երկու աղբիւրների մէջ միևնոյնն է՝ Նեստորականների, Ակակի և Բարձումայի խնդիրը Պարսկաստանում: Մինչև անգամ Բարգէնի նամակից գրեթէ բառացի կտոր կայ մէջ բերուած «Սակս ժողովոց»-ի մէջ:

1) Յովհ. կաթողիկոս, էջ 36.

2) Գիրք Թղթոց, էջ 220—223.

1) Գիրք Թղթոց, էջ 220—221.

Բարգևանի թուղթ¹ .

Սուկս ժողովոյ² .

«Եւ զի կամեցայք ի մէջ վասն նորին իրաց ուսանել, ծանուցանեմք ձեզ, եթէ Հոռոմք և մեք Հայք, և Վիրք և Աղուանք զհայհոյութիւնս զայս ոչ ընկալար և ոչ ընդունիմք և ոչ հաղորդիմք և ոչ հաւատամք, այլ և նզովեմք, որ այսպէսն ասեն և ուսուցանեն» :

«Գիր արարեալ Տէր Բարգէն, սահման կապելով, թէ իւր պատրեալ խաբեցեն զձեզ բանք դոցա. քանզի մեք Հայք և Հոռոմք, Վիրք և Աղուանք մի խոտտովանութեամբ եմք հաստատեալ ճշմարտ հաւատով ի լուանդր, զոր աւանդեցին մեզ սուրբ հարքն յերիս ժողովսն. ոչ ընդունիմք զայդպիսի բանս հայհոյութեան, այլ նզովեմք միաբան զնմանիս նորա» :

Կարծում ենք, որ մեր ասածի ճշտութեան մասին ոչ մի կասկած այլ ևս չի կարող ժողովը կողմէ Դուխնու. և եթէ «Սուկս ժողովոյ»-ի հեղինակը Քաղաքուդաշտում կամ Վաղարշապատում է գումարուած համարել այդ ժողովը, խոշոր սխալ է արել, քանի որ Բարգէնի թղթի մէջ, ինչպէս վերև տեսանք, որոշ կերպով Դուխն յիշուած է իբրև ժողովատեղի :

Հ. Ն. Ակինեանը Հանդ. Ամս. 1908. էջ 169 շարվերջին ծանոթութեան մէջ աւելացնում է հետևեալը. «Ժողովքիս (իման նրա կարծիքով 512/13-ին Վաղարշապատում գումարուած ժողովը Վրաց հետ միասին) ծանոթ կերևայ Բեթ-Արշամացի Սիմէօն եպիսկոպոսը, երբ կղբէ Անաստաս կայսեր օրով, թէ Հենոտիկոնն կընդունին և իւր հաւատքին կհետին այժմ և ունին յայտնի Վրաստանի (Gurzan) 33 եպիսկոպոս իրենց թագաւորներու և նախարարներու հետ, ինչպէս և Պարսկահայոց 32 եպիսկոպոս իրենց մարզպաններու հետ. Assemani Bibl. Or. I, 355 » :

Զարմանալի է, որ Հ. Ն. Ակինեանը այդ տեղեկութեանը ծանոթ լինելուց յետոյ էլ սխալների մէջ է մտնում և չի կարողանում ուղիղ եզրակացութիւնը դնել Սիմէօն

1) Գիրք Թղթոց, էջ 46.

2) Գիրք Թղթոց, էջ 221.

Բեթ-Արշամացին յայտնի է իբրև Նեստորականութեան ամենակատարի հակառակորդ, որ ոտքի տակ է տուել ամբողջ Պարսից պետութիւնը յոյներից, հայերից և ասորիներից վաւերացնելով Բարգէնի, որ նրանք հեռու են Նեստորի վարդապետութիւնից¹ . Մենք արդէն ապացուցել ենք, որ Սիմէօն Բեթ-Արշամացին յիրաւի Հայաստան էլ եկել է Բարգէնի կաթողիկոսութեան օրով, երբ հայերը կաւատի ԺԸ. տարին, 506 թուին, ժողովի էին հաւաքուած Դուխնում, յիշուած է Բարգէնի Ա. թղթի մէջ իբրև «Շմաւոն Բերդուշայ երէց»², հայերից էլ դաւանականութիւնից է վերցրել, որ նրանք հեռու են Նեստորականութիւնից և որ այդ դաւանականութիւնը հէնց մեր ձեռքն հասած Բարգէնի Ա. թուղթ համարուածն է³ . Ուրեմն Սիմէօն Բեթ-Արշամացին ոչ միայն ծանօթ է հայոց մի ժողովի, այլ անձամբ իբրև Պարսից ուղղափառներ ի կողմից ուղարկուած մի մարդ ներկայ է եղել ժողովին. Բայց այդ ժողովը ոչ 512/13-ին է եղել և ոչ էլ Վաղարշապատում, այլ Դուխնում 506 թուին. Որ և իցէ կասկած յաւուցանել այդ մասին թէ անհնարին է և թէ անտեղի, քանի որ ժողովի վաւերացնելով է մեր առաջ :

Ապա լուրջ ուշադրութեան արժանի է նաև այն հանգամանքը, որ Բարգէնը հէնց իւր Ա. թղթում, 506-ին գրած, շեշտում է Հայերի, Հոռոմների, Վրացիների և Աղուանների համաձայնութիւնը դաւանութեան խնդրում : Եթէ հայերը, վրացիները ու աղուանները համաձայն են հոռոմների հետ, այդ կարելի է միայն այն մտքով հասկանալ, որ Զենոնի Հենոտիկոնը ընդունելութիւն է դրել արդէն այդ երկիրներում : Ուրիշ կերպ հասկանալ անկարելի է այն պարզ պատճառով, որ Քաղկեդոնի դաւանութիւնը կայ մէջ տեղ. Եզրակացութիւնն այն է ուրեմն, որ

1) Հմմտ. Barhebr. Chron. eccl. III, 85 կամ մեր Die armenische Kirche, էջ 35.

2) « Գ » և « Բ » բաղաձայների տեղափոխութիւն.

3) Տես այդ բոլորի մասին մեր Die armenische Kirche etc. էջ 34—39. յատկապէս 34—36.

506 թուից առաջ արդէն կամ գոնէ ամենաուշը այդ թուին Հայերը, Վրացիք և Աղուանները պէտք է Ձենոնի Հենոտիկոնը ընդունած լինին և Հոռոմների հետ համաձայնած: Վերև յիշեցինք, որ Սիմէոն Բեթ-Արշամացին տեղեկութիւն է տալիս, որ Հայերն ու Վրացիք, առաջինները 32 եպիսկոպոսներով, վերջինները 33 եպիսկոպոսներով ընդունել են իւր ժամանակ Ձենոնի Հենոտիկոնը: Մեր կարծիքով այդ բոլորը տեղի է ունեցել Բարդէն կաթողիկոսի ժողովում, 506 թուին, Դուրնում:

Այս պարզ և շատ հաւանական ենթադրութիւնը շատերի համար կասկածելի է թուում միայն այն պատճառով, որ Բարդէնի Ա. թղթում չի յիշուած ամենեւին Ձենոն կայսեր միութեան հրովարտակը մի կողմից, իսկ միւս կողմից չեն յիշուած անուն անուն նաև Վրացիք և Աղուանները, որոնք ներկայ են եղել ժողովին: Բայց պէտք է ի նկատի ունենալ, որ այդ չյիշուելը իւր պարզ ու հասկանալի բացատրութիւնն ունի: Պարսկաստանի «ուղղափառ» (իմա միաբնակ) քրիստոնեաների մէջ մեծ յուզումն էր ընկել Ակակի ու Բարծուբայի, առհասարակ ամբողջ Նեստորական շարժման պատճառով, որովհետև Նեստորականները Հռովմէական պետութիւնից քշուելուց յետոյ Պարսկաստան էին ապաւինել: Այնտեղ կարիք էր զգացուել իմանալու, թէ ի՞նչ դիրք են բռնել հարևան եկեղեցիները դէպի Նեստորական ութութիւնը և այդ պատճառով էլ Պարսկաստանից մի քանի հոգևորականներ էին ուղարկուել, ի թիւս որոց և յայտնի Սիմէոն Բեթ-Արշամացին, հարևան եկեղեցիներէից, ուրեմն նաև Հայերից, դաւանութեան թուղթ բերելու: Այդ մարդիկը Դուրն են հասնում այն ժամանակ, երբ Բարդէնի ժողովն էր. և Հայոց կաթողիկոսը իւր եպիսկոպոսներով նրանց հականեստորական դաւանական գիր է տալիս: Խնդիրն այնքան պարզ է և բնական, որ ուրիշ կերպ սպասել էլ չի կարելի և ամենեւին զարմանալի էլ չէ Հենոտիկոնի չյիշուելը Բարդէնի թղթում: Թուղթը գրուած

է որոշ նպատակով և որոշ խնդրի համար և այդ խնդրից դուրս ոչնչի մասին չի խօսուած: Չպէտք է մոռանալ, որ Բարդէնի թղթում մինչև անգամ չէ յիշուած, թէ ինչու համար էին հաւաքուել այդչափ եպիսկոպոսներն ու իշխանները Դուրնում: Ենչու չա այն պատճառով, որ այդ դուրս էր Պարսից «ուղղափառներին» գրած թղթի բովանդակութեան շրջանակից: Կասկած չկայ, որ ժողովը Պարսից քրիստոնեաների տարակուսանքները լուծելու համար չէր. ժողովը արդէն դուրսուած էր, երբ նրանց պատգամաւորները Դուրն հասան: «Վասն զի ԺԸ. ամի Կաւատայ արքայից արքայի, մինչդեռ ես Բարդէն Հայոց եպիսկոպոսապետ ամենայն եպիսկոպոսաւք և վանականաւք և նախարարաւք ժողովեալ էաք յԱյրարատ գաւառ, յօտանն Հայաստան աշխարհիս ի Դուրն քաղաք, եկեալ հասին առ մեզ արք ոմանք, ուք ասացին զինքեանս լինել ի կողմանցդ յայդցանէ, ի Տեսքոնէ և ի Գարմիկանէ և ի Վհարտաշիւր Նահանգէ...»²:

Ուրեմն ժողովի գումարման պատճառներն այլ էին. իսկ այդ պատճառները կարող էին լինել մի կողմից ներքին խնդիրները, միւս կողմից Հենոտիկոնի ընդունելութիւնն ու դրանով Քաղկեդոնի որոշումների լուծեայն մերժումը³, ինչպէս տեղեկացնում է մեզ Սիմէոն Բեթ-Արշամացին, թէ այդ ժամանակ Հայերն ու Վրացիները ընդունել են Հենոտիկոնը: Որ Քաղկեդոնական ութութիւնն յիշատակուած չէ որոշ կերպով, ոչինչ չէ ապացուցանում. Դուրնի Բ. ժողովի (554) ժողովական թղթի մէջ էլ չէ յիշատակուած այն, այլ խօսուում է Նեստորական ութութեան մասին միայն, թէև պարզ է, որ Քաղկեդոնական ութութիւնն ևս վերջնականապէս մերժուած է այդ ժամանակներից սկսած⁴: Դրա պատճառն այն է, որ Ձ. դարում, և առհասարակ, միաբնակները «Նեստորական» անելով մեծ մասամբ «Քաղկեդոնական» էլ են հասկացել և երկու ա-

1) Epistola Simeonis Beth-Arsamensis de Barsauma, episcopo Nisibeno. Assemani, Bibl. Orient. I, 355.

1) Հմմտ. Գիրք Թղթոց, 41—42.

2) Գիրք Թղթոց, 42.

3) Տես մեր Die armen. Kirche, էջ 31 շար.

4) Տես Գիրք Թղթոց, 72—75. և մեր Die armen. Kirche, 46.

նունները միմեանց փոխարէն անխտիր գործածել, Քաղկեդոնիանութիւնը ոչ առանց որոշ իրաւունքի համարելով վերադարձ դէպի նետաորականութիւնը¹։

Մնում է պատասխանել վերջին խնդրին. եթէ յիրաւի Բարդէնի 506-ի ժողովում, Դուրնում, ներկայ են եղել նաեւ Վրաց և Աղուանից եպիսկոպոսները, ուրեմն Աբրահամի Գ. Թղթում առ Կիւրիոն² յիշուած ժողովը նոյնն է, ինչ որ 506-ի ժողովը Դուրնում, ինչպէս մենք իբրեւ շատ հաւանական ենթադրում ենք, հապա ինչպէս է, որ Բարդէնի Թղթում «ի Պարսս առ ուղղափառս» չեն յիշուած Վրաց և Աղուանից եպիսկոպոսները, Այդ հանդամանքը, որ շատերին դժուարացնում է ենթադրեալ ժողովները նոյնն համարելու և թիւրիմացութիւնների տեղիք է տալիս, մեր կարծիքով նոյնպիսի հեշտութեամբ վերանում է, ինչպէս բոլոր միւսները։ Պարսկաստանից եկած պատգամաւորները կամենում էին Հայերից դաւանութեան գիր վերցնել և ամենեւին կարիք չկար, որ Հայերի տուած դաւանական գրին (Բարդէնի Ա. Թուղթ համարուածը, Գիրք Թղթոց, 41—47), որ «Հաւատոյ նամակ» է կոչւում, ստորագրէին նաեւ Վրաց և Աղուանից եպիսկոպոսները։ Աբրահամ կաթողիկոսի Գ. Թղթի մէջ էլ առ Կիւրիոն անուն անուն յիշուած են միայն Վրաց եպիսկոպոսները, որովհետեւ այս դէպքում միայն այդ էր կարեւոր, առանց Հայերի և աղուանից եպիսկոպոսների յիշատակութեան։ «Այդ» այս երանելի եպիսկոպոսներն, որ յաշխարհէ ձերմէ էին, և ընդ Աղուանիւք և ընդ Սիւնիւք ի Հայոց դիպեցան յաւուրս Բարդէնայ Հայոց կաթողիկոսի, յայն ժողովն, յորում անիծան ի նոյանէն միաբանութեամբ ժողովն Քաղկեդոնի և տուժարն Լեոնի³։ Ինչպէս որ այստեղ կարեւոր չէ համարուել մէկ մէկ գրել բոլոր Հայ, վրացի և աղուան եպիսկոպոսների անունները, որովհետեւ խօսքը միայն վրա-

1) Հմմտ. G. Krüger, «Monophysiten» ընդարձակ յօդուածը գերմանական Realenzyklopädie für protest. Theologie und Kirche-ի մէջ, 3-րդ հրատարակութիւն, հատոր 13. էջ 399.

2) Գիրք Թղթոց, 180—184.

3) Գիրք Թղթոց, 183.

ցիւններին է վերաբերում, այնպէս էլ Բարդէնի նամակում կարեւոր չեն համարել գրելու Վրաց և Աղուանից եպիսկոպոսների անունները, որովհետեւ այդ նամակը գրուած է ՄԻՍՅՆ հայերի կողմից։

Ամենեւին կարեւոր չէին Վրաց և Աղուանից եպիսկոպոսների անունները Բարդէնի Ա. Թղթում ոչ միայն այն պատճառով, որ թուղթը գրուած էր հայերի կողմից, այլ մանաւանդ այն, որ ինչպէս մի քանի ակնարկներու տեղեկութիւններ ցոյց են տալիս, Պարսկաստանից եկած պատգամաւորները նոյնպիսի դաւանութեան գիր, ինչպէս հայերին է, վերցրել են նաեւ միւս աղգերից՝ վրացիներից և աղուաններից։ Աբրահամի Գ. Թղթի մէջ առ Կիւրիոն յիշուած է, որ ժողովում պայման նամակ են տուել միմեանց հաւատոյ վերաբերեալ իւրաքանչիւր աղգ իւր լեզուով¹. «Եւ զի պայման նամակն, որ հայերէն գրով էր, յապտամբութեանն կորեռու, և թարգմանեցաւ այս յուր հայ քաղաքի ի Հռոմ գրոյ. քանզի և նոքա ունէին ի մէնջ. և ստոյգ և սուրբ, սրպէս արժան էր, չկարացին թարգմանել. զի են, որ քաջ յայտնի են եպիսկոպոսացդ և եպիսկոպոսարանացն անուանք, և են որ կարի ի ծածուկ և այլաձևք. Բայց թէ կամիւր անուամբք եպիսկոպոսացն և յաջորդաւք տեղեացն և այլաձև անուամբք եպիսկոպոսացդ՝ որպէս գրեալ են, կարէք զստոյգ անուանս եպիսկոպոսարանացն գտանել, և զայլոցն ևս, քանզի և մեք զմերս, այդ տարազու մարթացաք գտանել, և մանաւանդ թէ զպայման նամակն իսկ գտանիցէք ձերով գրովս. Բայց այս պայման նամակը տրուած է փոխադարձաբար միմեանց, ինչպէս ասացինք, և ոչ թէ Պարսից «ուղղափառների» պատգամաւորներին։

Սակայն Բարդէնի Բ. Թղթում «ի Պարսս առ Ուղղափառս»² մի քանի խօսք կայ պահուած, որ մեզ միանգամայն հասկանալի է կացուցանում, թէ ինչու Վրաց և Աղուանից եպիսկոպոսները չեն յիշուած Հայոց հաւատոյ

1) Գիրք Թղթոց, 183.

2) Գիրք Թղթոց, 48—51.

նամակի մէջ: Այդ կտորը, որ վրիպել է տարբեր ժողովներ
ընդունողների ուշադրութիւնից, հետեւեալն է. «... Այսուիկ
վարիմք հաւատովք, զոր և դրեցաք իսկ ձեզ յա-
ռաջագոյն. Վրաց և Աղուանից միաբանու-
թեամբ, ԻԻՐԱՔԱՆՁԻԻՐ ԱՇԽԱՐՀԻ ԳՐՈՎ: Եւ այժմ՝
զնոյն երկրորդեցաք ի ձեռն հասարակաց եղբօր ըստ հա-
ւատոյ՝ Սիմէոնի նախանձաւոր երիցու, զի մի ոք համար-
ձակեսցի յայսմ՝ հակառակել և ընդդիմանալ պատճառա-
ւառ ի մէջը՝»:

Այս պարբերութիւնը, յատկապէս Վրաց և Աղուանից
աշխարհի դրօժ խօսքերը, պարզ և անվիճելի կերպով
ապացուցանում են, որ Բաբգէնի Ա. թղթի հետ միասին
Դուինի 506-ի ժողովի մասնակից Վրաց և Աղուանից ե-
պիսկոպոսներն էլ առանձին առանձին «Հաւատոյ նամակ»
են տուել Պարսից ուղղափառների ներկայացուցիչներին,
իրենց ստորագրութիւններով վաւերացրած, ինչպէս մեր
ձեռքն հասած Հայոց նամակն է, կամ Բաբգէնի Ա. թուղթը:
Այդ հասկանալի պատճառով էլ Հայոց նամակում չեն յի-
շատակուած Վրաց և Աղուանից եպիսկոպոսների անուն-
ները, ինչպէս և նրանց տուած թղթերում՝ չէին լինի Հայոց
եպիսկոպոսների անունները:

Այդպիսով մենք խնդիրը համարում ենք վերջնակա-
նապէս պարզուած և անվիճելի կերպով ապացուցուած:

Հայոց Բաբգէն կաթողիկոսը, մեզ հասած բոլոր աղբիւր-
ների տուած տեղեկութիւնների համաձայն, գումարել է
միայն ՄԻ ԺՈՂՈՎ ԴՈՒԻՆՈՒՄ, և ոչ մի ժողով Վաղար-
շապատում. իսկ այդ միակ ժողովը կայացել է անկասկած
506 ԹՈՒԱԿԱՆԻՆ Վրաց և Աղուանից մասնակցութեամբ,
և այն ժողովն է, որ յիշուած է նաև Աբրահամ կաթողի-
կոսի Գ. թղթի մէջ առ Վրաց կիւրիսն կաթողիկոսը:

ԵՐՈՒԱՆԴ ՎԱՐԴԱՊԵՏ ՏԷՐ ՄԻՆԱՍԵԱՆՑ

26 Յունիսի 1908.

ՄՄ Հայագիտական գրադարան



MAL022627

